# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2020 թվականի № 116-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի № 300-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի մարտի 17-ի №459/19 գրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի սեպտեմբերի 28-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մայիսի 13-ի №89-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №300-Ա որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետով հաստատված 9-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2020 թվականի մարտի 20 -ի № 116-Վ որոշման

«Հավելված №9՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2018 թվականի սեպտեմբերի 28-ի № 300-Ա որոշման

# ՊԼԱՆ

# ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

## ԳԼՈՒԽ 1.

## ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Համաճարակաբանական օջախ է համարվում վարակի ծագման ու տարածման համար նպաստավոր պայմաններ պարունակող տարածքը (բնակարան, թաղամաս, քաղաք և այլն): Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում պարբերաբար արձանագրվում են սուր աղիքային վարակների (այսուհետև ՍԱՎ), այդ թվում՝ սննդային ծագման, սուր շնչառական վարակների (այսուհետև ՍՇՎ), վիրուսային հեպատիտների (այսուհետև ՎՀ) և մակաբուծաբանական ինվազիաների դեպքեր: ՍԱՎ-ի օջախին բնորոշ են հիվանդների մարսողական խանգարման (փսխում, լուծ) և տենդով ուղեկցվող ախտանիշներ: ՍՇՎ-ի օջախին բնորոշ են հիվանդների վերին շնչուղիների մանրէային և վիրուսային ծագման վարակների ախտանիշներ, որոնք կարող են ուղեկցվել տենդով, հազով և բարդանալ թոքաբորբով: ՎՀ-ի օջախներին բնորոշ են հիվանդների լյարդաբորբով, դեղնուկով արտահայտվող ախտանիշներ:

2. Համաճարակային են համարվում վերոհիշյալ վարակներով խմբային հիվանդացման միաժամանակյա, համաճարակաբանորեն կապված 5 և ավելի դեպքերը կամ վարակի բռնկման իրական վտանգի առկայությունը:

3. Արտակարգ իրավիճակներում վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքում բնակչության հավանական սանիտարական կորուստները բնութագրվում են պետական (հիվանդների բուժման և օջախներում իրականացվող համապատասխան հակահամաճարակային միջոցառումների հետ կապված ծախսեր) և անհատական (ժամանակավոր անաշխատունակություն, առողջական խնդիրներ, այլ նյութական ծախսեր) կորուստներով:

4. Սանիտարահամաճարակային միջոցառումներն են՝ հիվանդի մեկուսացում, բուժում, հատուկ խնամք, հիվանդի հետ շփվածների մանրէաբանական հետազոտություն, բժշկական հսկողություն, շրջակա միջավայրի վարակվածության գնահատման նպատակով նմուշառում և հետազոտություն, ընթացիկ և եզրափակիչ ախտահանություն, սանիտարահիգիենիկ, բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում և քարոզչություն բնակչության շրջանում, իրավասու մարմինների կարանտին սահմանելու մասին առաջարկություն:

5. Համաճարակի դեպքում մարզային մակարդակի գործողություններն իրականացվում են Աղյուսակ №1-ում բերված պլան-ժամանակացույցին համապատասխան:

# ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
## ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը (Ժ+...) | | | | | | | | | | | | | | | | | | | | | Կատարող |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 օր | | | | | | | | | | | | | | | | | 2 օր | 3 օր | Հաջորդող օրեր | Հաջորդող շաբաթներ | |
| | | րոպե | | | | | ժամ | | | | | | | | | | | | | | | | |
| | | 5 | 10 | 20 | 40 | 60 | 2 | 4 | 6 | 8 | 10 | 12 | 14 | 16 | 18 | 20 | 22 | 24 | | | | | |
| 1. | Տեղեկատվության փոխանցում ՀՀ Շիրակի մարզպետին, ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՃԿԿ-ին | | | | | | | | | | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ |
| 2. | ՀՀ Շիրակի մարզի ԱԻ հանձնաժողովի ազդարարում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | ՄՓՎ |
| 3. | ՀՀ Շիրակի մարզի ԱԻ հանձնաժողովի անդամների ժամանում ՀՀ Շիրակի մարզպետարան | | | | | | | | | | | | | | | | | | | | | | ՄՓՎ<br>ՏԻՀԳՄՀ<br>ԱՍԱՎ<br>ԿՄՍՎ<br>ՔՎ<br>ՀՀՈ |
| 4. | ՀՀ Շիրակի մարզի ԱԻ հանձնաժողովի արտահերթ նիստ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | ՄՓՎ<br>ՏԻՀԳՄՀ<br>ԱՍԱՎ<br>ԿՄՍՎ<br>ՔՎ<br>ՀՀՈ |
| 5. | Ստեղծված իրավիճակի ներկայացում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ<br>ՏԻՀԳՄՀ |

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը (Ժ+...) | | | | | | | | | | | | | | | | | | | | | Կատարող |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 օր | | | | | | | | | | | | | | | | | 2 օր | 3 օր | Հաջորդող օրեր | Հաջորդող շաբաթներ | |
| | | րոպե | | | | | ժամ | | | | | | | | | | | | | | | | |
| | | 5 | 10 | 20 | 40 | 60 | 2 | 4 | 6 | 8 | 10 | 12 | 14 | 16 | 18 | 20 | 22 | 24 | | | | | |
| 6. | Առաջարկությունների ներկայացում՝<br>- հնարավոր վարակվածների հայտնաբերման,<br>- համայնքներում (բնակավայրերում) բժշկական շտաբների (խմբերի, թիմերի) ստեղծման,<br>- արձագանքող ստորաբաժանումների (խմբերի, թիմերի) համար ԱՊՄ ձեռք բերման,<br>- վարակազերծման միջոցների, անհրաժեշտ բժշկական պարագաների և դեղամիջոցների ձեռք բերման,<br>- հասարակական կարգի պահպանման վերաբերյալ,<br>- բնակչության իրազեկման իրականացման,<br>- հնարավոր վարակվածների հաշվառման և հնարավոր կոնտակտավորների հսկողության,<br>- հնարավոր վարակվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ<br>ՏԻՀԳՄՀ<br>ՄՓՎ<br>ՀՀՈ<br>ԿՄՍՎ<br>ՔՎ |

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը (Ժ+...) | | | | | | | | | | | | | | | | | | | | | Կատարող |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 օր | | | | | | | | | | | | | | | | | 2 օր | 3 օր | Հաջորդող օրեր | Հաջորդող շաբաթներ | |
| | | րոպե | | | | | ժամ | | | | | | | | | | | | | | | | |
| | | 5 | 10 | 20 | 40 | 60 | 2 | 4 | 6 | 8 | 10 | 12 | 14 | 16 | 18 | 20 | 22 | 24 | | | | | |
| | բժշկական զննության հնարավորությունների, - համայնքներում սանիտարահիգիենիկ և բացատրական աշխատանքների իրականացման, - հնարավոր վարակվածների բժշկական հաստատություններում տեղավորման, - հնարավոր վարակվածների լրացուցիչ վայրերում մեկուսացնելու տեղավորման վերաբերյալ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 7. | Խնդրադրում՝ սույն պլանի վերը նշված միջոցառումների իրականացման վերաբերյալ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | ՀՀ Շիրակի մարզպետ |
| 8. | ՀՀ Շիրակի մարզի ԱԻ հանձնաժողովի կազմից ինֆեկցիոն (վարակիչ) հիվանդության կանխարգելման և արձագանքման Շտաբի ձևավորում և աշխատակարգի սահմանում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | ՄՓՎ ՏԻՀԳՄՀ ԱՍԱՎ |

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը (Ժ+...) | | | | | | | | | | | | | | | | | | | | | Կատարող |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 օր | | | | | | | | | | | | | | | | | 2 օր | 3 օր | Հաջորդ օրեր | Հաջորդող շաբաթներ | |
| | | րոպե | | | | | ժամ | | | | | | | | | | | | | | | | |
| | | 5 | 10 | 20 | 40 | 60 | 2 | 4 | 6 | 8 | 10 | 12 | 14 | 16 | 18 | 20 | 22 | 24 | | | | | |
| 9. | Իրավիճակի վատթարացման դեպքում լրացուցիչ ուժերի ձևավորման և այդ ուժերի հնարավորությունների ճշգրտման աշխատանքների իրականացում | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | | Շտաբ |
| 10. | Ամենօրյա օպերատիվ արձագանքման և բնակչության սպասարկման ստորաբաժանումների անվտանգության և փոխարինելիության ապահովման կանոնակարգում | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | | ՀՀՌ ՄՓՎ |
| 11. | Բժշկական, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման ուժերի (խմբերի, թիմերի) պատրաստականության բերում | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ |
| 12. | Անհրաժեշտության դեպքում հոգեբանական աջակցության կազմակերպման խմբերի պատրաստականության բերում | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ ՄՓՎ |

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը (Ժ+...) 1 օր, րոպե: 5 | 10 | 20 | 40 | 60 | ժամ: 2 | 4 | 6 | 8 | 10 | 12 | 14 | 16 | 18 | 20 | 22 | 24 | 2 օր | 3 օր | Հաջորդող օրեր | Հաջորդող շաբաթներ | Կատարող |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13. | Հնարավոր վարակվածների և Շտաբների (խմբերի, թիմերի) տեղաշարժի ապահովման համար տրանսպորտային միջոցների պատրաստականության բերում | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | | ՔՎ<br>ԱՍԱՎ<br>ՀՀՈ<br>ՏԻՀԳՄՀ |
| 14. | Իրավիճակի վատթարացման դեպքում բնակչությանը սննդամթերքով, առաջին անհրաժեշտության և հիգիենայի պարագաներով ապահովման համար առկա հնարավորությունների ճշգրտում, անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցների ձեռնարկում | | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | ՖՏՏԶՎ |
| 15. | Տեղեկատվության հավաք և հաղորդում | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | | ՄՓՎ |
| 16. | Ամբողջական (առողջապահական) տեղեկատվության հավաքագրում և ամփոփում (վարում) | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ |

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը (Ժ+...) | | | | | | | | | | | | | | | | | | | | | Կատարող |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 օր | | | | | | | | | | | | | | | | | 2 օր | 3 օր | Հաջորդող օրեր | Հաջորդող շաբաթներ | |
| | | րոպե | | | | | ժամ | | | | | | | | | | | | | | | | |
| | | 5 | 10 | 20 | 40 | 60 | 2 | 4 | 6 | 8 | 10 | 12 | 14 | 16 | 18 | 20 | 22 | 24 | | | | | |
| 17. | Բնակչության շրջանում բժշկահիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի քարոզչության տարածում | | | | | | | | պարբերաբար | | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ<br>ԿՄՍՎ<br>ՏԻՀԳՄՀ |
| 18. | Մեկուսացվածների կենսաապահովման կազմակերպում | | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ<br>ՖՍՏԶՎ |
| 19. | Հնարավոր կոնտակտավորների նկատմամբ հսկողության սահմանում | | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ<br>ՀՀՈ<br>ՏԻՀԳՄՀ |
| 20. | Թեժ գծի աշխատանքի կազմակերպում | | | | | | | | | մշտապես | | | | | | | | | | | | | ԱՍԱՎ<br>ՄՓՎ |

Հապավումներ՝

ՀՀ- Հայաստանի Հանրապետություն.

ՀՀ ԱԻՆ ՓԾ- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն.

ՄՓՎ- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն.

ՃԿԿ- Ճգնաժամային կառավարման կենտրոն.

ՏԻՀԳՄՀ - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն.

ԱՍԱՎ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն.

ԿՄՍՎ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն.

ՔՎ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչություն.

ՖՍՏԶՎ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն.

ՀՀՈ - ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն.

ԱԻ- Արտակարգ իրավիճակներ.

ԱՊՄ- Անհատական պաշտպանության միջոցներ:

## ԳԼՈՒԽ 2.
## ԱԶԴԱՐԱՐՈՒՄ

6. Համաճարակաբանական հետազոտություն և հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու նպատակով յուրաքանչյուր վարակիչ հիվանդության դեպքի մասին բժշկական հաստատության կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Հյուսիսային տարածքային կենտրոն ուղարկվում է շտապ հաղորդում (գրավոր կամ բանավոր), որը հայտի ձևով ներկայացվում է փորձագիտական կենտրոն: Ընթացիկ դեպքերի համար Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Հյուսիսային կենտրոնը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղը ամիսը մեկ անգամ ներկայացնում է տեղեկատվություն՝ հաշվետվության պահանջվող ձևով, իսկ արտակարգ իրավիճակներում դեպքի կամ խմբային հիվանդացման իրավիճակի մասին հաղորդվում է վերը նշված կազմակերպություններին և Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օրվա հերթափոխի հերթապահին անմիջապես՝ որտեղից անհրաժեշտության դեպքում ստացվում է մեթոդական ցուցումներ և համապատասխան հանձնարարականներ: Զոոնոզ (կենդանական) ինֆեկցիաների և այլ համաճարակային իրավիճակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղը համագործակցում է պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, բուժ-կանխարգելիչ կազմակերպությունների, կրթական ոլորտի հաստատությունների, Շիրակի մարզային փրկարարական վարչության նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության հետ:

## ԳԼՈՒԽ 3.
## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ (ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐ)

7. Բնակչության շրջանում վարակի տարածումը կանխարգելելու նպատակով յուրաքանչյուր վարակիչ հիվանդության, ինչպես նաև արտակարգ, այդ թվում նաև համաճարակային իրավիճակներում.

1) համապատասխան տեղեկատվություն է տրամադրվում՝ անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվությամբ, օգտագործելով զանգվածային լրատվական միջոցները և իրականացնելով բակային համայցեր խմելու ջրի, հողի, սննդամթերքի արտաքին միջավայրի վարակվածության, նշված ուղիներով վարակի տարածումը կանխարգելելու նպատակով,

2) անձնական հիգիենայի կանոնների պահպանման համար անհրաժեշտ է ձեռքերի հաճախակի լվացում օճառով՝ հաց ուտելուց առաջ և զուգարանից օգտվելուց հետո, անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործում՝ ձեռնոց, դիմակ, հագուստ: Հիվանդի խնամքի պարագաների և սպասքի անհատական կիրառում, մշակում, հաճախակի օդափոխություն, մակերեսների խոնավ մաքրում՝ ախտահանիչ նյութերով և այլն:

8. Դիտարկման և կարանտինի կազմակերպումը իրականացվում է համաձայն հինգ տարին մեկ անգամ մշակվող և վերանայվող հատուկ վտանգավոր վարակների դեմ պայքարի մոբիլիզացիոն պլանի, որը հաստատվում է մարզպետի կողմից և որտեղ հստակ նշված են բժշկական հաստատությունների և բուժանձնակազմի ցանկը՝ կոնտակտային տվյալներով:

9. Մեկուսարանների ծավալումը իրականացվում է համապատասխան վարակների դեպքում մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գործող պլանի համաձայն:

10. Համաճարակային ցուցումներով պատվաստումների անցկացումն իրականացվում է անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով:

11. Վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը զուգահեռ բժշկավերականգնողական ծրագրերն իրականացվում են մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից:

12. Վարակի օջախում ախտահանման աշխատանքներն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Հյուսիսային

տարածքային կենտրոնի օջախային ախտահանման բաժնի կողմից, իսկ դեզինսեկցիոն, դերատիզացիոն աշխատանքները՝ համապատասխան ծառայության կողմից:

13. Մանրէաբանական հետազոտության նյութերի ընտրությունը, պահպանումը և առաքումը կատարվում է համապատասխան սանիտարական նորմերի կանոններին համապատասխան:

## ԳԼՈՒԽ 4.
## ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

14. Հակահամաճարակային փուլերում բժշկական տարահանման կազմակերպումը իրականացվում է ըստ վարակիչ հիվանդության դեմ պայքարի և կանխարգելիչ միջոցառումների հրատապության և առաջնահերթության:

## ԳԼՈՒԽ 5.
## ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

15. Անհրաժեշտության դեպքում իրականացվում է հարևան մարզերի և երկրների հետ տեղեկատվության փոխանակում, ինչպես նաև սանիտարակարանտինային կետերի հետ փոխհամագործակցություն:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է